# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

## 2021

# ՔԻՄԻԱ

## ԹԵՍՏ 6

| | |
|---|---|
| Խմբի համարը | |
| Նստարանի համարը | |

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

1 **Ո՞ր սահմանումն է համապատասխանում միացության մոլեկուլում տարրի ատոմների մոլային բաժնին.**

1) բոլոր ատոմների գումարային թվի հարաբերությունն է տարրի ատոմների թվին
2) միացության հարաբերական մոլեկուլային զանգվածի հարաբերությունն է տարրի հարաբերական ատոմային զանգվածին
3) տարրի ատոմների թվի հարաբերությունն է բոլոր ատոմների գումարային թվին
4) տարրի հարաբերական ատոմային զանգվածի հարաբերությունն է միացության հարաբերական մոլեկուլային զանգվածին

2 **Ո՞րն է քիմիական տարրերի շառավիղների մեծացման պատճառը պարբերական համակարգի գլխավոր ենթախմբերում կարգաթվի մեծացմանը զուգընթաց.**

1) միջուկում նեյտրոնների թվի մեծացումը
2) էլեկտրոնային շերտերի ավելացումը
3) միջուկի լիցքի մեծացումը
4) միջուկում պրոտոնների ավելացումը

3 **Նյութերի ո՞ր զույգի մոլեկուլներում տարրերի օքսիդացման աստիճանի և վալենտականության թվային արժեքները** *չեն համընկնում.*

1) $HPO_3$, $PCl_3$,
2) $H_3PO_3$, $HNO_2$
3) $HNO_3$, $P_4$
4) $H_2SO_4$, $H_4P_2O_7$

4 **Ո՞րն է $(NH_4)_2CO_3 + HCl \rightarrow$…… ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութում դրական և բացասական օքսիդացման աստիճան ունեցող տարրերի զանգվածների հարաբերությունը.**

1) 8 : 3
2) 1 : 2
3) 3 : 4
4) 3 : 8

**5** Համապատասխանեցրե՛ք տարրի ատոմի վալենտային շերտի էլեկտրոնային բանաձևը, այդ էլեկտրոնները բնութագրող գլխավոր և օրբիտալային քվանտային թվերի արժեքների հետ.

| Վալենտային շերտի էլեկտրոնային բանաձև | Գլխավոր քվանտային թվի արժեք | Օրբիտալային քվանտային թվի արժեք |
|---|---|---|
| ա) $2s^2 2p^4$ | 1) 1 | Ա) 1 |
| բ) $3s^2$ | 2) 3 | Բ) 0 |
| գ) $4s^2 4p^2$ | 3) 3 և 4 | Գ) 3 |
| դ) $3d^5 4s^2$ | 4) 4 | Դ) 0 և 1 |
| ե) $3s^2 3p^3$ | 5) 5 | Ե) 2 |
| | 6) 2 | Զ) 2 և 0 |

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

1) ա6Ե, բ2Բ, գ4Դ, դ3Զ, ե2Դ
2) ա6Դ, բ2Բ, գ4Դ, դ3Զ, ե2Դ
3) ա1Ա, բ6Գ, գ3Զ, դ2Զ, ե5Զ
4) ա6Դ, բ2Բ, գ4Դ, դ3Գ, ե2Դ

**6** Հետևյալ նյութերից որո՞նք են ատոմային բյուրեղավանդակով նյութեր.

*ա) սիլիցիումի օքսիդ*
*բ) վոլֆրամ*
*գ) պղնձի նիտրատ*
*դ) տիտանի (II) օքսիդ*
*ե) կարբորունդ*
*զ) սպիտակ ֆոսֆոր*
*է) բոր*
*ը) մեթան*

1) ա, դ, ե, է
2) ա, բ, գ, դ
3) բ, գ, ե, զ
4) գ, դ, է, ը

**7** Ի՞նչ հիբրիդային վիճակում է գտնվում ազոտի ատոմը ամոնիակի մոլեկուլում, և ի՞նչ կապ է առկա ազոտի և ջրածնի ատոմների միջև.

1) $sp^2$, կովալենտային բևեռային
2) $sp^3$, կովալենտային բևեռային
3) sp, կովալենտային ոչ բևեռային
4) $sp^3$, կովալենտային ոչ բևեռային

**8** Ո՞ր շարքի բոլոր միացությունների մոլեկուլներում են առկա դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապեր.

1) $KNO_2$, $Li_2O_2$, $SiH_4$
2) $NaNO_3$, $NO_2$, $NH_4Cl$
3) $NH_4Cl$, CO, $NaNO_3$
4) $C_2H_5OH$, $Ca_3N_2$, $CH_4$

| 9 |
|---|

**Ո՞ր իզոտոպի միջուկը երկու $\beta-$ և մեկ $\alpha-$ տրոհման ենթարկելիս կառաջանա $^{224}Ra$ իզոտոպը.**

1) $^{228}Ra$
2) $^{222}Rn$
3) $^{226}Rn$
4) $^{224}Ra$

| 10 |
|---|

**Ո՞ր աղն է ստացվում 1 : 6 մոլային հարաբերությամբ ֆոսֆորի (V) օքսիդի և NaOH–ի ջրային լուծույթի փոխազդեցությունից, և ո՞ր դասին է պատկանում այդ ռեակցիան.**

1) $Na_3PO_4$ , միացման
2) $NaH_2PO_4$, փոխանակման
3) $Na_2HPO_4$, միացման
4) $Na_3PO_4$, փոխանակման

| 11 |
|---|

**Ո՞ր շարքի իոնների իսկությունն է հաստատվում, եթե դրանք պարունակող լուծույթին համապատասխան ազդանյութ ավելացնելիս գազ է անջատվում.**

1) $SO_3^{2-}$, $S^{2-}$, $OH^-$
2) $SO_3^{2-}$, $CO_3^{2-}$, $NH_4^+$
3) $Al^{3+}$, $NO_2^-$, $CO_3^{2-}$
4) $SO_4^{2-}$, $NO_3^-$, $Cl^-$

| 12 |
|---|

**Ո՞ր նյութերն են ջրային լուծույթում դիսոցվելիս առաջացնում $H^+$ իոններ.**

| | |
|---|---|
| *ա) HCOOH* | *դ) $HClO_3$* |
| *բ) $NH_3$* | *ե) $CH_3NH_3OH$* |
| *գ) HCOONa* | *զ) $Ca(HSO_4)_2$* |

1) ա, դ, զ
2) բ, ե, զ
3) ա, գ, ե
4) բ, դ, զ

| 13 |
|---|

**Ո՞ր դեպքում $FeCl_3$–ի հիդրոլիզը կխորանա.**

1) KCl ավելացնելիս
2) լուծույթը սառեցնելիս
3) լուծույթը նոսրացնելիս
4) HCl ավելացնելիս

*(14-15) Ջրային միջավայրում կալիումի պերմանգանատի 31,6 գ նմուշը վերականգնվելիս ձեռք է բերել 0,6 մոլ էլեկտրոն:*

**14** **Ո՞րը կարող է լինել վերականգնված նյութի բանաձևը.**

1) $O_2$
2) $K_2MnO_4$
3) $MnO_2$
4) $MnSO_4$

**15** **Որքա՞ն է էթիլենի և կալիումի պերմանգանատի միջև ջրային միջավայրում ընթացող ռեակցիայի հավասարման գործակիցների գումարը.**

1) 21
2) 8
3) 16
4) 18

***(16-17) Ըստ $8Al_{(պ)} + 3Fe_3O_{4(պ)} = 4Al_2O_{3(պ)} + 9Fe_{(պ)} + 3326$ կՋ ջերմաքիմիական հավասարման.***

**16** Որքա՞ն է $Al_2O_3$ օքսիդի գոյացման ջերմությունը (կՋ/մոլ), եթե $Fe_3O_4$–ի գոյացման ջերմությունը 1116 կՋ/մոլ է.

1) 2503,5
2) 3337
3) 1668,5
4) 834,25

**17** Որքա՞ն է փոխազդած ալյումինի զանգվածը (գ), եթե անջատվել է 166,3 կՋ ջերմություն.

1) 21,6
2) 10,8
3) 16,2
4) 5,4

**18** Ո՞րն է $Si + KOH + H_2O$ … … ուրվագրով ռեակցիայի հավասարման մեջ վերականգնման հետևանքով ստացված նյութի գործակիցը.

1) 4
2) 1
3) 2
4) 3

*(19-20) Տրված է $N_{2\,(գ)}$ + $3H_{2\,(գ)} \rightarrow 2NH_{3\,(գ)}$ քիմիական ռեակցիայի հավասարումը.*

**19** Ո՞րն է տրված ռեակցիայի կինետիկական հավասարումը.

1) $v = 2k \cdot C_{NH_3}$
2) $v = k \cdot C_{N_2} \cdot C_{H_2}$
3) $v = 3k \cdot C_{N_2} \cdot C_{H_2}$
4) $v = k \cdot C_{N_2} \cdot C_{H_2}^3$

**20** Քանի՞ անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը միաժամանակ ջրածնի կոնցետրացիան երկու անգամ մեծացնելիս, իսկ ազոտի կոնցենտրացիան երկու անգամ փոքրացնելիս.

1) 12
2) 1
3) 4
4) 8

**21** **Համապատասխանեցրե՛ք դարձելի ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը հավասարակշռության տեղաշարժի ուղղության հետ ճնշումը իջեցնելիս և ջերմաստիճանը բարձրացնելիս.**

| Ռեակցիայի հավասարում | Ճնշման իջեցում | Ջերմաստիճանի բարձրացում |
|---|---|---|
| ա) $CH_{4(գ)} + H_2O_{(գ)} \rightleftarrows CO_{(գ)} + 3H_{2(գ)} - Q$ | 1) դեպի ձախ | Ա) դեպի ձախ |
| բ) $2CO_{(գ)} \rightleftarrows C_{(պ)} + CO_{2(գ)} - Q$ | 2) դեպի աջ | Բ) դեպի աջ |
| գ) $C_{(պ)} + O_{2(գ)} \rightleftarrows CO_{2(գ)} + Q$ | 3) չի տեղաշարժվի | |
| դ) $CH_{4(գ)} + 4S_{(պ)} \rightleftarrows CS_{2(գ)} + 2H_2S_{(գ)} + Q$ | | |
| ե) $FeO_{(պ)} + H_{2(գ)} \rightleftarrows Fe_{(պ)} + H_2O_{(գ)} + Q$ | | |
| զ) $N_{2(գ)} + O_{2(գ)} \rightleftarrows 2NO_{(գ)} - Q$ | | |

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

1) ա2Բ, բ1Բ, գ3Ա, դ2Ա, ե3Բ, զ3Բ
2) ա1Բ, բ1Բ, գ3Բ, դ2Ա, ե2Բ, զ1Ա
3) ա2Բ, բ1Բ, գ3Ա, դ2Ա, ե3Ա, զ3Բ
4) ա2Ա, բ2Ա, գ1Ա, դ2Բ, ե3Ա, զ2Ա

| 22 |
|---|

Պղնձի և ալյումինի փոշիների որոշակի զանգվածով խառնուրդին ավելացրել են *a* գ աղաթթու: Որոշ ժամանակ անց՝ չփոխազդած մասը հեռացնելուց հետո, լուծույթի զանգվածը կազմել է *b* գ: Ինչպե՞ս են փոխհարաբերվում այդ զանգվածները.

1) a >> b
2) a = b
3) a > b
4) a < b

| 23 |
|---|

Ո՞ր դեպքում է ջրածնի իոնների կոնցենտրացիան մեծանում.

*ա) նատրիումի ֆենոլատին աղաթթու ավելացնելիս*
*բ) քացախաթթվին նատրիումի ացետատ ավելացնելիս*
*գ) նատրիումի հիդրոսուլֆատի լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս*
*դ) նատրիումի ֆոսֆատի լուծույթին ֆոսֆորի(V) օքսիդ ավելացնելիս*

1) ա, դ
2) բ, դ
3) ա, բ
4) բ, գ

| 24 |
|---|

Կալիումի և պղնձի նիտրատների հավասարամոլային խառնուրդը շիկացրել են մինչև աղերի լրիվ քայքայվելը և ստացված գազային խառնուրդն անցկացրել են ալկալու լուծույթով: Ինչպե՞ս է փոխվել գազային խառնուրդի ծավալը.

1) չի փոփոխվել
2) փոքրացել է 5 անգամ
3) փոքրացել է 6 անգամ
4) փոքրացել է 3 անգամ

| 25 |
|---|

Ո՞ր նյութերի ջրային լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս կաթոդի վրա ջրածին կանջատվի.

*ա)* $MgSO_4$
*բ)* $AgNO_3$
*գ)* $NaOH$
*դ)* $ZnSO_4$
*ե)* $CuCl_2$

1) ա, գ, դ
2) բ, գ, ե
3) ա, դ, ե
4) բ, գ, դ

*(26–27) Տրված են հետևյալ աղերը.*
*ա) $Na_2SO_3$ բ) $NaHCO_3$ գ) $K_2SO_3$ դ) $KHCO_3$*

**26** Այդ աղերից ո՞րն է բոցին տալիս մանուշակագույն երանգ և փոխազդում կալիումի հիդրօքսիդի հետ.

1) գ
2) դ
3) ա
4) բ

**27** Ի՞նչ գույն է ստանում լակմուսը բոցին դեղին գույն տվող և մեծ մոլային զանգված ունեցող աղի ջրային լուծույթում.

1) չի գունավորվում
2) կապույտ
3) դեղին
4) կարմիր

**28** **Ո՞ր նյութերը հաջորդաբար կգոյանան կրաջուրը ծծմբի(IV) օքսիդով հագեցնելիս.**
*ա) $Ca(HSO_3)_2$, բ) $Ca(HSO_4)_2$, գ) $CaSO_4$ դ) $CaSO_3$,*

1) բ, գ
2) գ, ա
3) դ, ա
4) ա, դ

**29** **Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի երկաթի (III) քլորիդը.**

1) $CuSO_4$, $Ca(OH)_2$, $CO_2$
2) MgO, HCl, $H_2SO_4$
3) Mg, $HNO_3$, $Cl_2$
4) $AgNO_3$, Cu, NaOH

**30** **Ո՞ր զույգ նյութերն են քարածխի չոր թորման արգասիքներ.**

1) ամոնիակ, կոքս
2) կոքս, եռբրոմֆենոլ
3) ամոնիակ, նիտրոբենզոլ
4) ֆենոլ, քլորոֆորմ

**31** **Համապատասխանեցրե՛ք փոխազդող նյութերը, այդ փոխազդեցությունից ստացվող վերջանյութերը և այդ գործընթացում վերականգնված տարրի ատոմի օքսիդացման աստիճանը.**

| Փոխազդող նյութեր | Վերջանյութեր | Վերականգնված տարրի օքսիդացման աստիճան |
|---|---|---|
| ա) պղինձ և ազոտական թթու (նոսր)<br>բ) մագնեզիում և ազոտական թթու (շատ նոսր)<br>գ) ծծումբ և ծծմբական թթու (խիտ)<br>դ) սիլիցիումի (IV) օքսիդ և ածխածին (ավելցուկ) | 1) $Mg(NO_3)_2 + NH_4NO_3 + H_2O$<br>2) $CO\uparrow + Si$<br>3) $CO\uparrow + SiC$<br>4) $Mg(NO_3)_2 + NO + H_2O$<br>5) $Cu(NO_3)_2 + NO + H_2O$<br>6) $Cu(NO_3)_2 + NO_2 + H_2O$<br>7) $SO_2 + H_2O$<br>8) $H_2S + H_2O$ | Ա) 0<br>Բ) -3<br>Գ) +4<br>Դ) -2<br>Ե) +2<br>Զ) -4 |

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

1) ա6Ա, բ4Ե, գ7Ա, դ3Զ
2) ա5Ե, բ1Բ, գ7Գ, դ2Զ
3) ա6Ա, բ1Բ, գ8Գ, դ3Դ
4) ա5Ե, բ1Բ, գ7Գ, դ3Զ

**32** **Ո՞ր շարքի բոլոր նյութերն են ցիկլոհեքսանի իզոմերներ.**

1) 3–մեթիլպենտան, 1,2,3–եռմեթիլցիկլոպրոպան, 3–մեթիլպենտեն–1
2) 1,2–երկմեթիլցիկլոբութան, 2–մեթիլպենտեն–1, 2–մեթիլպենտան
3) 1,1,2–եռմեթիլցիկլոպրոպան, հեքսեն–2, մեթիլցիկլոպենտան
4) 1,1– երկմեթիլցիկլոբութան, 2–մեթիլպենտեն–2, հեքսին-2

**33** **Ո՞ր երկհալոգենածանցյալից կարելի է ստանալ 1,2–երկմեթիլցիկլոբութան.**

1) 1,4–երկքլորբութան
2) 1,3–երկբրոմհեքսան
3) 1,6–երկքլորհեքսան
4) 2,5–երկբրոմհեքսան

| 34 |
|---|

**Ո՞ր շարք են ներառված $X_1$, $X_2$ և $X_3$ նյութերի բանաձևերն ըստ հետևյալ փոխարկումների.**

$$C \equiv C \xrightarrow{H_2O(Hg^{2+},H_2SO_4)} X_1 \xrightarrow{Ag_2O\ /\ NH_3} X_2 \xrightarrow{Na_2CO_3} X_3$$

1) $(CH_3COO)_2Hg$, $CH_3COOAg$, $CH_3COONa$
2) $CH_3CHO$, $CH_3CH_2OH$, $CH_3CH_2ONa$
3) $CH_3CHO$, $CH_3COOH$, $CH_3COONa$
4) $CH_3COOH$, $CH_3CHO$, $CH_3CH_2ONa$

| 35 |
|---|

**Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի անվանումը, հավասարման ձախ մասի ուրվագիրը և օրգանական վերջանյութի դասը.**

| Ռեակցիայի անվանում | Հավասարման ձախ մասի ուրվագիր | Օրգանական վերջանյութի դասը |
|---|---|---|
| ա) դեհալոգենացում<br>բ) հիդրում<br>գ) դեհիդրոհալոգենացում<br>դ) հիդրատացում | 1) $CH_3\text{-}CH{=}CH_2{+}H_2O \xrightarrow{H^+}$<br>2) $C_2H_6{+}Cl_2 \xrightarrow{h\nu}$<br>3) $CH_3CH_2CH_2Cl{+}KOH_{(\text{սպիրտ})} \rightarrow$<br>4) <br>5) $CH_3\text{-}CH{=}CH_2{+}H_2 \xrightarrow{Pt}$ | Ա) ցիկլոալկան<br>Բ) սպիրտ<br>Գ) ալկան<br>Դ) ալկիլհալոգենիդ<br>Ե) ալկեն |

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

1) ա3Բ, բ1Բ, գ3Ե, դ1Բ
2) ա2Դ, բ5Գ, գ4Ա, դ5Գ
3) ա4Ե, բ5Գ, գ3Ե, դ1Բ
4) ա4Ե, բ5Գ, գ2Ե, դ1Բ

| 36 |
|---|

**Ո՞ր շարքում են նյութերը դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.**

1) էթանոլ, ֆենոլ, էթիլենգլիկոլ, մեթանաթթու
2) էթանոլ, ֆենոլ, մեթանաթթու, գլիցերին
3) ֆենոլ, մեթանաթթու, գլիցերին, էթանոլ
4) մեթանոլ, գլիցերին, ֆենոլ, մեթանաթթու

37 **Ո՞րն է բաց թողած բառը.**

*Գլիցերինի _______ անվանումով ճարպի լրիվ հիդրումից առաջացած պինդ ճարպի Mr–ի արժեքը 6 միավորով մեծ է ելային ճարպի Mr–ի արժեքից:*

1) եռպալմիտատ
2) եռլինոլատ
3) եռօլեատ
4) եռստեարատ

38 **Ո՞ր զույգ ներառված նյութերից յուրաքանչյուրը կփոխազդի պղնձի (II) հիդրօքսիդի հետ $Cu_2O$ կարմիր նստվածք առաջացնելով.**

1) ֆրուկտոզ, ցիկլոպենտան
2) սախարոզ, ցելյուլոզ
3) գլիցերին, օսլա
4) ռիբոզ, մալթոզ

39 **Մեկական մոլ էթիլացետատի և անհայտ օրգանական միացության խառնուրդի լրիվ հիդրոլիզի համար պահանջվել է 20 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 280 գ լուծույթ: Ո՞րն է անհայտ օրգանական միացության անվանումը.**

1) քացախաթթվի անհիդրիդ
2) մեթիլացետատ
3) գլիցերինի եռօլեատ
4) տոլուոլ

40 **Ո՞ր ամինաթթուների մնացորդներն են մտնում երկպեպտիդի բաղադրության մեջ, եթե նրա մեկ մոլը փոխազդում է քլորաջրածնի հետ 1 : 2, իսկ կալիումի հիդրօքսիդի հետ 1 : 1 մոլային հարաբերությամբ.**

1) սերին և ալանին
2) լիզին և գլիցին
3) գլիցին և ալանին
4) գլուտամինաթթու և օրնիտին

41 Որոշակի ծավալով օդն օզոնարարով անցկացնելիս ծավալը կրճատվել է 224 մլ–ով (ն. պ.)։ Ի՞նչ զանգվածով (մգ) յոդ կանջատվի ստացված գազային խառնուրդն ավելցուկով կալիումի յոդիդ պարունակող ջրային լուծույթի միջով անցկացնելիս։

42 20 % խառնուկ պարունակող կալցիումի կարբիդի 60 կգ նմուշից երկու փուլով ստացել են 15,6 կգ բենզոլ։ Որքա՞ն է երկրորդ փուլի ելքը (%), եթե առաջին փուլն ընթացել է քանակապես։

43 H–H քիմիական կապի էներգիան $7 \cdot 10^{-19}$ Ջ է։ Որքա՞ն է ատոմներից 10 գ ջրածին ստանալիս անջատվող ջերմությունը (կՋ)։

44 7 մոլ էթենը տեղավորել են 2 դմ$^3$ ծավալով փակ անոթում և ենթարկել պոլիմերացման: Որքա՞ն է էթենի մոլային կոնցենտրացիան (մոլ/դմ$^3$) ռեակցիան սկսվելուց 5 վրկ հետո, եթե պոլիմերացման ռեակցիայի միջին արագությունը 0,5 մոլ/դմ$^3$ • վրկ է:

45 Միահիմն թույլ թթվի 0,4 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթում թթվի դիսոցման աստիճանը 0,025 է: Ի՞նչ քանակով (մմոլ) մասնիկներ (չդիսոցված մոլեկուլներ և իոններ) են պարունակվում այդ թթվի 200 մլ լուծույթում:

*(46-47) Ջրածին ստանալու նպատակով հպումային սարքում (կոնտակտային ապարատ) խառնել են 2 մոլ մեթանը 4 մոլ ջրային գոլորշու հետ: Փոխազդել է սկզբնական խառնուրդի 75 %–ը: Մեթանը փոխարկվել է մինչև ածխածնի (IV) օքսիդ:*

46 Որքա՞ն է ջրածնի ծավալային բաժինը (%) ջրային գոլորշին կոնդենսացնելուց հետո ստացված վերջնական խառնուրդում:

47 Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 35 % զանգվածային բաժնով լուծույթ պետք է վերցնել, որպեսզի ստացված ածխածնի (IV) օքսիդն ամբողջովին փոխարկվի թթու աղի:

*(48-49) Բջջանյութի նիտրացման արգասիքում ազոտի մոլային բաժինը 8 % է:*

48 Ի՞նչ զանգվածով (գ) ազոտական թթու կծախսվի 504 գ տրված նիտրոբջջանյութ ստանալու համար:

49 Ի՞նչ ծավալով (մլ, ն. պ.) ազոտ կստացվի 12,6 գ ստացված նիտրոբջջանյութի այրումից:

*(50-51) Մեկ լիտր տարողությամբ փակ անոթում համապատասխան պայմաններում փոխազդեցության մեջ են դրել 1 մոլ ազոտ և 0,8 մոլ ջրածին: Համակարգում ստեղծվել է հավասարակշռություն, երբ ծախսվել է ազոտի 20 %–ը:*

| 50 | Որքա՞ն է հավասարակշռային հաստատունի թվային արժեքը նշված պայման-ներըում:

| 51 | 39,2 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի ի՞նչ զանգվածով (գ) լուծույթ է պահանջվում հավասարակշռային խառնուրդում գտնվող ամոնիակը կլանելու համար, եթե ստացված աղը պարունակում է դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած մեկ կապ:

*(52-53) Տրված է թթվածնի և ազոտի (IV) օքսիդի 1 : 4 ծավալային հարաբերությամբ 32,4 գ գազային խառնուրդ:*

52 Ի՞նչ ճնշում (Պա) կունենա այդ խառնուրդը, եթե այն գտնվի 0,83 $մ^3$ փակ անոթում 227 $^0C$ ջերմաստիճանում (R = 8,3 Ջ/մոլ • Կ, $T_0$ = 273 Կ):

53 Նշված զանգվածով գազային խառնուրդն անցկացրել են 24 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 1667,6 գ լուծույթի մեջ: Որքա՞ն է լուծույթում ստացված աղի զանգվածային բաժինը (%):

*(54-55) Պղնձե իրն արծաթապատելու նպատակով այն օգտագործել են որպես կաթոդ (որպես անոդ ծառայել է գրաֆիտե էլեկտրոդը) և իրականացրել արծաթի նիտրատ պարունակող 56,3 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզ: Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ կատոդի վրա անջատվել է 1568 մլ (ն. պ.) գազ, իսկ իրի զանգվածն ավելացել է 4,32 գրամով:*

| 54 | Որքա՞ն է անոդի վրա անջատված գազի ծավալը (մլ, ն. պ.): |
|---|---|

| 55 | Որքա՞ն է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում: |
|---|---|

*(56-58) Մեթանոլի և էթանոլի գոլորշիների 8,5 գ խառնուրդը տաքացման պայմաններում 32 գ պղնձի (II) օքսիդ պարունակող խողովակով անցկացնելիս վերջինիս զանգվածը պակասել է 3,2 գրամով: Խողովակում մնացած նյութերը լրիվ լուծելու համար օգտագործել են խիտ ծծմբական թթվի 73,5 % զանգվածային բաժնով լուծույթ ($\rho$ = 1,6 գ/մլ$^3$), իսկ օրգանական նյութերի խառնուրդն օքսիդացրել են անհրաժեշտ քանակությամբ արծաթի (I) օքսիդի ամոնիակային լուծույթով:*

56 Որքա՞ն է մեթանոլի մոլային բաժինը (%) սպիրտների ելային խառնուրդում:

57 Ի՞նչ ծավալով (մլ) ծծմբական թթվի լուծույթ է պահանջվել խողովակում մնացած նյութերը լրիվ լուծելու համար:

58 Ի՞նչ զանգվածով (գ) մետաղական արծաթ է ստացվել:

*(59-61) Փակ անոթում տեղավորել են մեկ մոլ նյութաքանակով ազոտի (IV) օքսիդի դիմերը և թեթևակի տաքացրել: Որոշ ժամանակ անց ստեղծվել է երկու օքսիդների հավասարակշռային խառնուրդ՝ $N_2O_{4(գ)} \rightleftarrows 2NO_{2(գ)}$, որի խտությունն ըստ հելիումի 12,5 է: Հավասարակշռային խառնուրդը թթվածնի առկայությամբ անցկացրել են ջրի մեջ, ինչի արդյունքում ստացվել է ազոտական թթվի 21 % զանգվածային բաժնով լուծույթ:*

| 59 |
|---|

Որքա՞ն է դիմերի քայքայման աստիճանը (%):

| 60 |
|---|

Որքա՞ն է ստացված ազոտական թթվի լուծույթի զանգվածը (գ):

| 61 |
|---|

Որքա՞ն է ծախսված թթվածնի նյութաքանակը (մմոլ):

*(62-64) Մագնեզիումի և կարմիր ֆոսֆորի 278 գ զանգվածով խառնուրդը թթվածնի բացակայության պայմաններում տաքացրել են մինչև ռեակցիայի ավարտը և ստացված պինդ մնացորդին անհրաժեշտ քանակով աղաթթու ավելացնելիս ստացել 10 գ/մոլ միջին մոլային զանգվածով գազերի խառնուրդ: Վերջինս փակ անոթում անհրաժեշտ քանակով թթվածնում այրելիս գոյացել է օրթոֆոսֆորական թթվի ջրային լուծույթ:*

| 62 | Որքա՞ն է ֆոսֆորի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում: |
|---|---|

| 63 | Որքա՞ն է աղաթթվում լուծված քլորաջրածնի քանակը (մոլ): |
|---|---|

| 64 | Որքա՞ն է օրթոֆոսֆորական թթվի մոլային բաժինը (%) ստացված լուծույթում: |
|---|---|

*(65-67) Սենյակային ջերմաստիճանում երկաթի (II) քլորիդի 39,376 % զանգվածային բաժնով որոշակի զանգվածով լուծույթին ավելացրել են 100 գ անջուր երկաթի (II) քլորիդ և տաքացնելով լուծել: Տաք լուծույթը մինչև ելային ջերմաստիճան սառեցնելիս նստել է 238,8 գ բյուրեղահիդրատ, և մնացել է 40 % զանգվածային բաժնով 361,2 գ լուծույթ (տաքացնելիս աղի հիդրոլիզն անտեսել):*

| 65 | Որքա՞ն է սկզբնական լուծույթի զանգվածը (գ): |
|---|---|

| 66 | Որքա՞ն է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ): |
|---|---|

| 67 | Ի՞նչ զանգվածով (գ) ջրում պետք է լուծել 398 գ բյուրեղահիդրատը փորձի ջերմաստիճանի պայմաններում հագեցած լուծույթ պատրաստելու համար: |
|---|---|

68 **Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ելանյութերը և վերջանյութերը.**

| Ելանյութեր | Վերջանյութեր |
|---|---|
| ա) $C_6H_5NO_2$ և $H_2$ | 1) $NH_2CH_2COOC_2H_5$, $H_2O$ |
| բ) $CH_3NH_2$ և $O_2$ | 2) $CO_2$, $H_2O$, $N_2$ |
| գ) $NH_2CH_2COOH$ և HCl | 3) $C_6H_5NH_2$, $H_2O$ |
| դ) $NH_2CH_2COOH$ և $CH_3OH$ | 4) $NH_2CH_2COOCH_3$, $H_2O$ |
| | 5) $ClH_3NCH_2COOH$ |
| | 6) CO, $H_2O$, NO |

69 **Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ֆենոլի վերաբերյալ.**

1) Օժտված է ուժեղ մանրէասպան հատկությամբ:
2) Ցիկլոհեքսանոլը պատկանում է ֆենոլների դասին:
3) Ֆենոլից և բրոմաջրից 2,4,6-եռբրոմֆենոլի առաջացման ռեակցիան ֆենոլի հայտաբերման որակական ռեակցիաներից է:
4) 117 գ բենզոլի քլորացումից ստացվել է քլորբենզոլ, որի հիմնային հիդրոլիզից առաջացել է 90 գ ֆենոլ, երբ ռեակցիաններն ընթացել են 80% ելքով:
5) Արդյունաբերության մեջ ստանում են կումոլի օդի թթվածնով կատալիզատորի առկայությամբ օքսիդացնելիս:
6) Երկաթի(III) քլորիդի հետ տալիս է մանուշակագույն գունավորում:

70 *Կալցիումի հիդրիդի և մետաղական կալցիումի 1:2 մոլային հարաբերությամբ որոշակի զանգվածով խառնուրդին ավելացրել են 80 գ կալցիումի կարբիդ և ստացված խառնուրդը մշակել են ջրի մեծ ավելցուկով: Ստացվել է լուծույթ, և անջատվել է գազերի խառնուրդ: Գազային խառնուրդը տաք նիկելի կատալիզորդի վրայով անցկացնելիս ստացվել է 28,4 գ/մոլ միջին մոլային զանգվածով ածխաջրածինների խառնուրդ: Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ.*

1) Ջրով մշակելուց հետո անջատված գազային խառնուրդում փոքր մոլային զանգվածով գազի ծավալային բաժինը 85% է:
2) Սկզբնական խառնուրդում մետաղական կալցիումի զանգվածը 30 գ է:
3) Ստացված լուծույթում առկա է 2,375 մոլ $Ca^{2+}$ իոններ:
4) Ստացված լուծույթում առկա $Ca^{2+}$ իոնները լրիվ նստեցնելու համար կպահանջվի 96 գ ծծմբի (IV) օքսիդ:
5) Մեծ մոլային զանգվածով գազի ծավալային բաժինը ածխաջրածինների խառնուրդում 20 % է:
6) Ածխաջրածինների խառնուրդում փոքր մոլային զանգվածով ածխաջրածինը մեթանն է: